Տ. ԳԱՐԵԳԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՈՆԻՆ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(12 հուլիսի, 2026 թ.)

Յաւուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

Սիրելի՛ եղբայրներ եւ քոյրեր,

Այսօր Վարդավառ է, Պայծառակերպության տոնն է: Այսօր մենք հոգեւոր կերպով բարձրանում ենք Թաբոր լեռը՝ Պետրոսի, Հակոբոսի եւ Հովհաննեսի հետ, որպեսզի տեսնենք այն, ինչ նրանք տեսան, լսենք այն, ինչ նրանք լսեցին, եւ վերադառնանք այնտեղից այլակերպված:

Սուրբ Գրքում լեռները պարզապես աշխարհագրական վայրեր չեն: Դրանք Աստծու հետ հանդիպման վայրեր են: Լեռան վրա Մովսեսն ստացավ Օրենքը, Եղիան լսեց Աստծու ձայնը, իսկ այսօր՝ Թաբոր լեռան վրա, առաքյալները տեսնում են Քրիստոսի աստվածային փառքը: Լեռը խորհրդանշում է, որ մարդը բարձրանում է իր առօրյա հոգսերից, աղմուկից եւ երկրավոր մտածողությունից, որպեսզի տեսնի երկնային իրականությունը:

Մարդիկ այսօր նույնպես սիրում են լեռներ բարձրանալ: Շատերը ամիսներ շարունակ պատրաստվում են, ժայռեր են հաղթահարում, պարաններով բարձրանում, որպեսզի հասնեն գագաթին: Սակայն հաճախ, երբ վերջապես հասնում են, հասկանում են, որ այն դատարկ է: Գագաթը գեղեցիկ տեսարան է տալիս, բայց չի կարող լցնել մարդու սիրտը:

Այսօրվա բարձրանալը բոլորովին ուրիշ է: Այս լեռան վրա մարդը չի գտնում միայն գեղեցիկ բնություն: Այստեղ մարդը գտնում է Աստծուն:

Բայց պետք է նկատենք մի կարեւոր ճշմարտություն. նախքան պայծառակերպության տեղի ունենալը, պահանջվում է բարձրանալ: Հայտնությունը գալիս է վերելքից հետո: Հոգեւոր կյանքում նույնպես այդպես է.

եթե ցանկանում ենք տեսնել Աստծու լույսը, պետք է պատրաստ լինենք բարձրանալու՝ թողնելով այն, ինչը մեզ ներքեւ է պահում։

Մի իմաստուն խոսք ասում է. «Յուրաքանչյուր գագաթ մի ժամանակ անհնար էր թվում նրան, ով կանգնած էր լեռան ստորոտում»։ Եւ գիտեք, որքան բարձր ես բարձրանում, այնքան քիչ ես լսում հովիտի աղմուկը։ Եւ իսկապես, որքան մոտենում ենք Աստծուն, այնքան ավելի են լռում աշխարհի աղմուկները մեր ներսում։ Ըստ լեռնագնացների, լեռները ոչ թե բացահայտում են, թե որքան ուժեղ են ոտքերդ, այլ՝ որքան սիրտդ է դիմացկուն։ Մենք չենք կարող հասնել գագաթին, եթե մեզ հետ տանում ենք ամբողջ հովիտը։

Այսօրվա Ավետարանում մեր Տեր Հիսուս Քրիստոս պայծառակերպվում է։ Ավետարանիչներն օգտագործում են մի բառ, որը հունարենում հնչում է «մետամորֆոզի»։ Սա պարզապես արտաքին փոփոխություն չէ։ Սա ներքին իրականության բացահայտումն է։ Քրիստոս չդարձավ Աստված այդ պահին. Նա միշտ Աստված էր, բայց այժմ բացահայտեց Իր աստվածային փառքը Իր աշակերտներին։

Եւ այդ պահին տեղի է ունենում մի բացառիկ տեսարան։

Օրենքն ու մարգարեությունը սպասում էին այս օրվան։ Օրենքը՝ Թորան, սպասում էր Նրան, ով վերջապես ամբողջությամբ կպահեր Աստծու օրենքը։ Եւ ահա Մովսեսը, որ մարմնավորում է Օրենքը, կանգնած է Նրա առջեւ, ով կատարյալ կերպով կատարեց Օրենքը։

Մարգարեները սպասում էին Մեսիային, Իսրայելի փրկչին, Աստծու Օծյալին։ Եւ ահա Եղիան՝ մարգարեների ներկայացուցիչը, կանգնած է Նրա կողքին, ում մասին դարեր շարունակ մարգարեացել էին։

Ինչպիսի՛ պատկեր է այս պահը։ Հին Կտակարանի ամբողջ սպասումը կենտրոնանում է մեկ անձի վրա՝ Հիսուս Քրիստոսի։

Եւ այսօր մենք էլ միանում ենք Պետրոսին, Հակոբոսին եւ Հովհաննեսին։ Մենք գիտենք, թե ով է Թագավորը։ Այժմ ցանկանում ենք միանալ Նրա բանակին։

Առաքյալներն այնքան էին հիացած այդ տեսարանով, այնքան էին ներշնչվել այդ լույսից, որ չէին ցանկանում հեռանալ։ Այդ պատճառով Պետրոսն ասում է. «Տե՛ր, որքան լավ է, որ մենք այստեղ ենք. եթե կամենաս, երեք տաղավար շինենք՝ մեկը Քեզ, մեկը Մովսեսին եւ մեկը Եղիային»։

Արդյո՞ք մենք էլ երբեմն չենք ասում. «Տե՛ր, որքան լավ է այստեղ»։ Երբ աղոթքը ջերմ է, երբ պատարագը հոգին լցնում է խաղաղությամբ, երբ

զգում ենք Աստծու ներկայությունը, մենք էլ չենք ուզում, որ այդ պահն ավարտվի։

Բայց Աստված ցանկանում է, որ լեռան վրա ստացած լույսը տանենք հովիտ։

Այդ պահին երկնքից լսվում է Հոր ձայնը.

«Դա է Իմ սիրելի Որդին, որին հավանեցի. Նրան լսեցե՛ք»։

Առաքյալները երեսնիվայր ընկնում են եւ սաստիկ վախենում։ Աստծու սրբության առջեւ մարդը միշտ զգում է իր փոքրությունն ու անկատարությունը։

Բայց Ավետարանը չի ավարտվում վախով։

Հիսուս մոտենում է, դիպչում է նրանց եւ ասում.

«Վե՛ր կացեք եւ մի՛ վախեցեք»։

Սա այսօր նաեւ մեզ ուղղված խոսքն է։ Մեր Տերը չի գալիս մեզ կոտրելու, այլ՝ բարձրացնելու։ Նա չի գալիս մեզ դատապարտելու, այլ՝ ձեռք մեկնելու։ Նրա առաջին խոսքը մեզ այսօր էլ նույնն է. «Վե՛ր կաց եւ մի՛ վախեցիր»։

Հետաքրքիր է նաեւ, թե ովքեր էին այդ երեք առաքյալները։

Ինչո՞ւ էր այնտեղ Պետրոսը։ Որովհետեւ նա ամենից շատն էր սիրում Քրիստոսին։ Երեք անգամ նա պիտի հաստատեր այդ սերը՝ ասելով. «Տե՛ր, Դու գիտես, որ սիրում եմ Քեզ»։

Ինչո՞ւ էր այնտեղ Հովհաննեսը։ Որովհետեւ նա այն աշակերտն էր, որին Հիսուսն առանձնահատուկ սիրեց։

Ինչո՞ւ էր այնտեղ Հակոբոսը։ Որովհետեւ նա առաջին առաքյալն էր, որ իր կյանքը տվեց Քրիստոսի համար։

Այս երեք առաքյալները կարծես քրիստոնեական կյանքի երեք մեծ դասերն են սովորեցնում մեզ։

Պետրոսի նման պետք է սիրենք Քրիստոսին մեր ամբողջ հոգով։

Հովհաննեսի նման պետք է թույլ տանք, որ Քրիստոս սիրի մեզ։

Եւ Հակոբոսի նման պետք է պատրաստ լինենք անհրաժեշտության դեպքում նույնիսկ մեր կյանքը տալ Նրա համար։

Սիրելինե՛ր, այսօր էլ մենք տեսնում ենք Պայծառակերպությունը։

Ամեն Սուրբ Պատարագի ժամանակ մենք բարձրանում ենք մեր Թաբոր լեռը։ Լսում ենք Հին Կտակարանի ընթերցումները՝ Օրենքն ու Մարգարեները։ Ապա գալիս է Ավետարանը, որտեղ հայտնվում է Քրիստոս։ Երբ Սուրբ Սկիհը բարձրացվում է, մենք տեսնում ենք մեր Թագավորին։

Իսկ երբ հաղորդվում ենք Նրա Մարմնով եւ Արյամբ, մենք ընդունում ենք Նրան մեր մեջ։

Այդ պահին մենք արտահայտում ենք մեր սերը Նրա հանդեպ, թույլ ենք տալիս, որ Նա սիրի մեզ, եւ հետո, ինչպես առաքյալները, ուղարկվում ենք աշխարհ։

Նկատե՛ք, թե ինչ է տեղի ունենում Ավետարանում։

Լույսը մարում է։ Մովսեսն ու Եղիան այլեւս չեն երեւում։ Աշակերտները տեսնում են միայն Հիսուսին։

Եւ հետո… իջնում են լեռից։ Նրանք այնտեղ չեն մնում։

Ինչպես էմմավուսի երկու աշակերտները Քրիստոսին ճանաչելուց հետո շտապեցին վերադառնալ Երուսաղեմ՝ միանալու տասնմեկ առաքյալներին, այնպես էլ այս երեքը, տեսնելով Թագավորին, վերադառնում են Երուսաղեմ՝ իրենց կյանքը նվիրելու Ավետարանի քարոզությանը։

Սա շատ կարեւոր է։ Քրիստոնեական կյանքը միայն լեռան վրա ապրած գեղեցիկ զգացումներ չէ։ Այն վերադարձ է դեպի աշխարհ՝ ծառայելու համար։

Ինչպես առաքյալները, մենք էլ ապրում ենք սովորական օրերով՝ աշխատում ենք, սովորում ենք, ճանապարհ ենք անցնում, հոգսեր ունենք։ Բայց ամեն օրը կարող է դառնալ փոխակերպման հնարավորություն։ Երբ սիրում ենք, երբ ներում ենք, երբ ծառայում ենք ուրիշներին, մենք արտացոլում ենք այն թաքնված փառքը, որը տեսանելի դարձավ Թաբոր լեռան վրա։ Աստծու լույսը կարող է անակնկալ կերպով ճեղքել մեր ամենասովորական օրը։ Այդ փոխակերպումը սկսվում է նաեւ մեր մտածողությունից։ Սուրբ Պողոս առաքյալն ասում է. «Մի՛ կերպարանվեք այս աշխարհի կերպարանքով, այլ նորոգվե՛ք ձեր մտքի նորոգությամբ» (Հռոմեացիներ ԺԲ. 2)։ Արտաքին կյանքը փոխվում է, երբ նախ փոխվում է մեր միտքը։

Մի գեղեցիկ խոսք ասում է. «Վերքը այն տեղն է, որտեղ լույսը լավագույնս ներս է մտնում»։ Միգուցե այսօր մեր կյանքում կան վերքեր, հիասթափություններ, կորուստներ։ Բայց հենց այդ ճեղքերով էլ կարող է Աստծու լույսը մտնել մեր կյանք։

Թաբոր լեռան լույսը միայն երեք առաքյալների համար չէր։ Այն մեզ համար էր։

Այսօր մենք բարձրացանք նրանց հետ, տեսանք Թագավորին, լսեցինք Հոր ձայնը, զգացինք Քրիստոսի ձեռքի հպումը եւ լսեցինք Նրա խոսքը. «Վե՛ր կաց եւ մի՛ վախեցիր»։

Այժմ ժամանակն է իջնելու լեռից: Վերադառնալու մեր ընտանիքներ, մեր աշխատանք, մեր ծառայություն, մեր առօրյա կյանք: Բայց այլևս ոչ այնպես, ինչպես բարձրացանք:

Այլ՝ որպես մարդիկ, ովքեր տեսել են Թագավորին, սիրում են Նրան, թույլ են տալիս, որ Նա սիրի իրենց, եւ պատրաստ են իրենց կյանքը նվիրել Նրա Ավետարանին, մինչեւ այն օրը, երբ հավիտենության մեջ լիովին ճաշակենք այն փառքը, որի միայն մի շողը երեք առաքյալները տեսան Թաբոր լեռան վրա: Յուրաքանչյուրս մեր մտքի մեջ ասենք. «Տե՛ր, որքան լավ է, որ մենք այստեղ ենք»: Եւ քեզ փառք, հավիտյանս: Ամեն: